# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 38

### ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգով

Որոշում եմ՝

1.Ռուզան Երվանդի Գրիգորյանին տալ այգետնակի քանդման թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Քարաշամբ համայնքի 8-րդ փողոցի թիվ 4 հասցեում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուզան Երվանդի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավարի ժ/պ՝** **ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 39

### ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 17 հունիսի 2010 թվականի N753-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրության 64–րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, ինչպես նաև 07-066-0302-0010 ծածկագրի տակ գտնվող, քաղաքացիների՝ հանգուցյալ Մնացական Մարտիրոսյանի,Առուշան Մարտիրոսյանի,Իրինա Սեդրակյանի կողմից 0.63208 հա գյուղ նշանակության ավել օգտագործվող հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանված հողամասերի, այդ թվում ինժիներատրանսպորտային օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ.

Որոշում եմ ՝

0.63208 հա ավել օգտագործվող հողամասը ճանաչել որպես քաղաքացիներ՝ հանգուցյալ Մնացական Մարտիրոսյանի, Առուշան Մարտիրոսյանի, Իրինա Սեդրակյանի սեփականություն:

**Համայնքի ղեկավարի ժ/Պ՝** **ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 40

## ՀԷՑ ՓԲԸ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման, Քարաշամբ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N41 որոշման, հաշվի առնելով ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիմումը.

Որոշում եմ՝

1.ՀԷՑ ՓԲԸ-ին տալ Քարաշամբ համայնքի 6-րդ փողոց 20 հասցեում գտնվող Նազիկ Մնացականյանին պատկանող տարածքի 0,22 ԿՎ էլեկտրամատակարարման/ նախագիծ 4829 –ԷՄ/ միացման աշխատանքների իրականացման շինարարության թույլտվություն:

2. ՀԷՑ ՓԲԸ–ն պարտավոր է Քարաշամբի համայնքապետարան վճարել 15 000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Քարաշամբ համայնքի ղեկավարին ներկայացնել N2-5 ձևի տեղեկանք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀԷՑ ՓԲԸ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավարի Ժ/Պ՝** **ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 41

## ՔԱՐԱՇԱՄԲԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-ԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, ինչպես նաև Քարաշամբ համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 10-ի N6 որոշմամբ.

Որոշում եմ՝

1.Քարաշամբի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը գտնվում է Քարաշամբ համայնքի 2-րդ փող. 5 փկղ. 1 հասցեում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավարի ժ/Պ՝** ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 42

## ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N37 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով.

Որոշում եմ՝

Քարաշամբ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 29-ի «գույքի օտարման մասին» N37 որոշումը համարել ուժը կորցրած:

**Համայնքի ղեկավարի Ժ/Պ՝** ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՇԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քարաշամբ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քարաշամբ, (060)464727, karashamb@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N43

### ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18- ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N912-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 34,35 և 35.1 կետերի,հիմք ընդունելով Ռոզա Վարդանի Մելքոնյանի կողմից 2021 թ. ապրիլի 5-ին Քարաշամբ համայնքի ղեկավարին ներկայացրած դիմումը,ինչպես նաև այն հանգամանքը,որ կառույցն իրականացրած անձը ընդունել է ուղղակի վաճառքի միջոցով ձեռք բերելու վերաբերյալ իրեն ներկայացված առաջարկությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ուղղակի վաճառքի միջոցով Ռոզա Վարդանի Մելքոնյանին օտարել Քարաշամբ համայնքի 1-ին փ. 4 նրբ. 1/1 հացեում գտնվող (կադ . ծածկագիր՝07-066-0028-0040) համայնքային սեփականություն հանդիսացող 0,00570 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը՝107 029 ՀՀ դրամ, հողամասի վրա ինքնակամ կառուցված 6,03 քմ մակերեսով պարիսպը `17 064 ՀՀ դրամ արժեքով:

2.Ձևավորված վաճառքի գնին հավելել միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացրած վճարները՝66000(չափագրման աշխատանքներ՝40.000)ՀՀ դրամ, վաճառքի ընդհանուր արժեքը սահմանել 190 093 ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ